*Օրհնեալ Եղիցի Յիսուս Քրիստոս. փառաւորեալ է կոյսն Մարիամ Մայրըն նորայ։*

*Սիրելի Հայր Ստեփաննոս և գարաղի Ներող*
*Ողջոյն ի Քրիստոս*

*Ընկալա և ընթերնելով զըրած փափակելի գիրըդ իմացա կրօնաւորական ողջխուժինըդ, բովանդակ տունուտեղովըս, ազականներովըս, բարեկամացմովըս խընտացա ու ուրախացայ։ Շնորհօքն Աստուծոյ ես զավկըններովըս քոյ Մաքրափայլ աղօթիւքն մինչև այս ժամանակըս կայնք և առողջինք ամենեքեանըս, վորօնք խօնարհաբար և մեծ փափակմամբ ողջույն Սիրով ձէրքըդ համբուրելով կումատուցանենք։ Դէ օր խըսմաթ չունացա Մարմնավօր հանդըպելու հետըդ Գարաղի Որդեակ իմ, գըրածէդ ինծի ատպէս ուժվէցեցավ ինչպէս տէսնուի, հանդըպէի, Մարմնավօր հերուիմ մօտէդ լըման է, բայց հոգովս մօտիկիմ. զէրա Հօրքուրտիմ. հայցելով միշտ և հանապազ ի Տեառնէ փրկչէն, որ պահէ զքեզ ամէն դիվական փորցութենէ. Երանիէ քեզ Որդեակ որ ըստ ասացելույն Սուրբ Ավետարանին հետևելիս. եթէ ոչ որ թօղցէ զՀայր և զՄայր ոչ է ինձ արժանի, թօղելով հօգի և պատրանք Աշխարհս, ի մէջ Դրախդին կիբընակիս, ամենևին միտք պէդքէ անէլու, զի որ համբերեսցէ խոպար նա կեցցէ. Աստւած չնորքըտ ավէցընու որ Աստվածպաշտութեանդ մէջ զօվելի ընդ կրօնավօրսըն ի փառըս Աստուծոյ և ի պարծանս մեր ընտրեալ լինիս, և Սուրբ աղօթից մէչ անարժանս ալ յիչիս, ես ալ ըստ կարեացս զօրա անմօռանալի պիլամ զիմ ծուր ու մուր աղօթիցս մէջ զՏէրն աղաչելով։ Գերյարգելի և Պատուելի Աբբահօյրն խօնարհաբար չնորհակալնիմ, ստը և ծեռքն կուհամբուրիմ որպէս Մարիամ Մակտաղենացին զՔրիստոսի, որ ատպէս Հայրախնամ աչօք կիհաէ վըրատ, բարի Սըրտովը կիկարավարէ և ամենաբարութիւն կիուսուցանէ, Յօհաննու Ավետարանչուն ըստ ասացելույն նըմանէ. Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակէ և ամենայն ուռ որ բերէ զպտուղ, սըրբէ զնայ զի առաւել ևս պտղաբեր լիցի։ Յուսամ ի Տէր, որ ամենեքեանդ բերիք զպտուղ ըստ Մարկոսի, ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր, Հայրըն Երկնաւոր պրատապէս հատուցէ ձեզ ըստ գործոց ձերոց, Գերյարգելի և Պ. Աբբահայրն ալ կարնա ասէլու, ահա ես և մանկունք իմ, երանավէտ ձայնըր արժանի լինիք լըսէլու, եկայք, Օրհնեալք, Հօյր իմօյ, և ժառանգեցէք անխըսար ուրախութիւն, զօր պատրաստեալէ սիրելեաց եուրոց. ավելի պակաս կիխնդրեմ թօղութիւն չնորհիս այս սակաւ գըրույս, և ավարտելով կումընամ.*

*Յարգելութեանդ*
*Գարաղի Հօրքույր Ուլխաթուն Ագօնց*
*յիմայ Աննայ Թօրօսի Բասազասեան*

*Դիսմինիս* 16 Xbris
Ann. 1767

# ՄՀՋ.

*Այս Նամակագիրը Յովհաննէս վրդ. Թասպասեան, զրութեանս Թուականին «ընտրեալ եպիսկոպոս Մարտինու», յաջորդն է Մելգոն Մարգար Թուխմանեան եպս.ի նոյն վիճակին։ Այս Թղթով ցոյց կու տայ Մխիթարայ գործին հանդէպ իր ունեցած մեծ յարգանքն ու համարումը։*

*Երիցս յարգելի Ստեփաննոս Աբբայիդ և սուրբ միաբանութեանդ ողջոյն ի տէր*

*Յանցեալ ամսոջ իտալեան զրով Հայրութեանդ ծանուցի, որպէս թէ սուրբ Հայրն մեր Մարգար վարդապետն մատուցեալ ըստ սովորութեան զսուրբ պատարագն յառաւօտուն*